

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

29.04.2022թ. կայացած նիստի

թիվ 8 արձանագրություն

Օրակարգ

1. ՈւԳԸ նախագահի հաշվետվություն:
2. ՈւԽ նախագահի հաշվետվություն:
3. 2021-2022թ.թ.ու. տարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում:
4. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստին ներկա էին 36 անդամներից 22-ը:

1.ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ ՈւԳԸ նախագահի հաշվետվությանը: ՈւԳԸ նախագահ Ֆարիդա Խաչատրյանը ներկայացրեց 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների հաշվետվությունը:

1.Տեղեկատվական հանդիպում-իրագրելում

«Արի՛ ԵԼՀ ՈւԳԸ, գիտակիրթ ուսանող» 17.09 Հանդիպման ընթացքում ներկայացվեց՝

ՍՈՒԳԸ կառույցի բուն էությունը, ներկայիս ուրույն աշխատելառճը, մի շարք կազմակերպությունների հետ համագործակցությունը:

ՍԱՆՊԱՌԱԿԱՐԴ կատարվեց ֆակուլտետային ՈւԳԸ ի ծավալած բազմաբովանդակ գործունեությանը, ինչպես նաև ՈւԳԸ անդամակցության կարգին:

ՆԱՍՆ ՀԱՍԿԻՐԸ տեղեկատվություն տրամադրվեց ԵՊՀ ում գործող կրթական ակումբ-խմբակների առանձնահատուկ դերի և գործելակերպի վերաբերյալ:

2.Սեմինար-քննարկում

«Լիցենզավորված թարգմանիչ դառնալու նախադրյալները»

08.09 Սեմինարի սկզբում անդրադարձ կատարվեց.

•Թարգմանված ֆիլմերի լեզվական սխալներին և վերջիններիս շտկումներին, ինչպես նաև հեռուստատեղեկատվության խոսքի առանձնահատկություններին

•Այնուհետև ներկայացվեցին թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի մագիստրոսական 2 կարևորագույն և նմանը չունեցող ծրագրերը՝

«Վարչագործարարական թարգմանություն»

«Զբոսաշրջային թարգմանություն»

•Բանախոսության ընթացքում նաև տրամադրվեց բուն մասնագիտական տեղեկատվություն՝ նոտարական թարգմանչի լիցենզավորման, քննության անցկացման ընթացակարգի վերաբերյալ

Բանախոս՝ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. տիկին Ռուզաննա Ղազարյան

3.Վիկտորինա խաղ-մրցույթ՝ «Խոսի՛ր ինձ հետ»/ "Talk to me"

28.09 Վիկտորինան անցկացվեց մի քանի փուլով, մասնակիցները ամեն փուլին համապատասխան վաստակեցին միավորներ և ձեռք բերեցին մի շարք նոր լեզվական գիտելիքներ:

4. Այց թանգարան՝ Երևանի պատմության թանգարանի տարազների ցուցադրության սրահ

29.09 Այցի ընթացքում ՈւԳԸ անդամները ծանոթացան ցուցանմուշների տարածաշրջանային առանձնահատկություններին ու յուրահատկություններին, ինչպես նաև խորհրդանիշներին, զարդերին, հնագույն հագուկապին ու պաճուճանքին, իսկ տարագային քարտեզի շնորհիվ բացահայտեցին իրենց իսկ արմատների պատմական ակունքները:

5.Գրքի քննարկում՝ Ալբեր Կամյու «Ժանտախտը»

22.10 Քննարկման ընթացքում շեշտադրվեցին հետևյալ առանցքները՝

- Կամյուն՝ որպես գրող (էքզիստենցիալիզմ)
- Աբսուրդը և ընդվզումը Կամյուի ստեղծագործությունում
- «Ժանտախտը» վեպի հիմնական առանձնահատկությունները (պատմական համատեքստ, կերպարային համակարգ)

▪Զուգահեռներ

(Ժանտախտ և COVID-19)

▪Ժանտախտը՝ որպես խորհրդանիշ

Բանախոս՝ ՈւԳԸ անդամ, Կիրառական լեզվաբանություն բաժնի մագիստրանտ Նարե Շալունց:

6.Ֆիլմի դիտում՝ «Վստահի՛ր ինձ»

22.10 Ֆիլմի դիտմանը ներկա էին և՛ ԵԼՀ ֆակուլտետի ուսանողները, և՛ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողները, ինչպես նաև Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկան Գևորգ Բարսեղյանը, Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Ռուզաննա Ղազարյանը, ՈւԳԸ անդամները, ֆակուլտետի դասախոսական կազմի ներկայացուցիչներ, հյուրեր: «Վստահի՛ր ինձ» վավերագրական ֆիլմում ներկայացվում են դեպքեր, որոնք ի ցույց են դնում ապատեղեկատվության ազդեցության հետևանքները հանրային կարծիքի ձևավորման և վարքագծի փոփոխման վրա:

7. Դասախոսություն՝ «Մեդիագրագիտություն»

22.10 ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի և Հանրային լրագրության ակումբի հետ համագործակցության շնորհիվ այսօր ԵՊՀ-ում տեղի է ունեցել հանդիպում-դասախոսություն հետաքննող լրագրող Տիրայր Մուրադյանի հետ, որից հետո ուսանողներն առաջին անգամ բացառիկ իրավունքով հնարավորություն ունեցան դիտելու «Վստահի՛ր ինձ» («Trust me») վավերագրական ֆիլմը, որը մեղիագրագետ լինելու անհրաժեշտության և ապատեղեկատվության վատ հետևանքների մասին է:

8. Մեմինարների շարք «CV գրելու և հարցազրույցին ճիշտ պատրաստվելու հմտություններ»

19.10/20.10 Հոկտեմբերի 19-ին և 20-ին տեղի ունեցավ «CV գրելու և հարցազրույցին ճիշտ պատրաստվելու հմտություններ» խորագրով երկօրյա դասընթացը, որը կազմակերպվել էր ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից: Դասընթացը վարեց ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի տնօրեն՝ Լիլիթ Հակոբյանը: Դասընթացին իրենց մասնակցությունն ու ներգրավվածությունը ունեցան նաև Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության նախագահն ու անդամները:

9. Գիտաժողով՝ ՈւԳԸ 7-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով

05.10 Երեկ՝ հոկտեմբերի 5-ին, ԵՊՀ ՈւԳԸ միջազգային 7-րդ երիտասարդական գիտաժողովի շրջանակներում լեզվաբանության ենթաբաժանմունքում տրվեց գեկուցումների մեկնարկը: Մասնակից-գեկուցողները հանդես եկան բովանդակալից և յուրօրինակ հոդվածների գեկուցմամբ թե՛ հեռավար և թե՛ առկա տարբերակներով և արժանացան հավաստագրերի:

10. Մեմինարների շարք՝ «Ֆրանսերենի միջազգային քննությունները Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի համատեքստում»

17.11

18.11

19.11 1. Լեզուների իմացության համաեվրոպական համակարգ.

Եվրախորհրդի կրթական քաղաքականությունը

(Բանախոսներ՝ Նարե Շալունց, Ֆարիդա Խաչատրյան)

2. Հաղորդակցական կարողության ձևավորումը՝ օտար լեզվի ուսուցման կարևորագույն բաղադրիչ

(Մեմինարավար՝ Նարե Շալունց)

(նոյեմբերի 18-ին՝ ժամը 19:30-ին)

3. Ֆրանսերենի միջազգային քննություններ. տեսակներ և առանձնահատկություններ (DELF, DALF, TCF, TEF, DPF)

(Մեմինարավար՝ Նարե Շալունց)

11. Ֆիլմի դիտում-քննարկում

"The Intern"

14.11 ԵԼՀ ՈւԳԸ-ն Գրքադար-ի հետ մի նոր համագործակցությամբ է հանդես գալիս՝ մեկնարկելով յուրատիպ, ուսուցողական և գիտահանրամատչելի ծրագիր՝ ԳրքաՈւԳԸադար:

Դե իսկ համագործակցության մեկնարկն ազդարարող առաջին ծրագիրը The Intern ֆիլմի դիտում-քննարկումն էր:

Ֆիլմի քննարկումը վարեց ՈւԳԸ կամավոր-անդամ՝ Լիանա Մուրադյանը:

12. Բանախոսությունների շարք

Expert talks

1. Media and Non-governmental Organizations as Actors of Change in Higher Education.

2. Academic writing and plagiarism as phenomena.

3. Quality and achievements in the reform of Higher Education in V4 countries in frames of the Bologna system.

22.11

23.11

26.11

27.11 ՈւԳԸ անդամները մասնակցեցին էքսպերտային բանախոսություններին, որոնց արդյունքում հարստացրեցին իրենց գիտելիքներն ուսանողական իրավունքների, կրթական համակարգի Բոլոնյան բարեփոխումների, ակադեմիական ազնվության և գրագողության, կրթական համակարգում կոռուպցիայի, մեդիագրագիտության և այլ կարևոր թեմաների շուրջ:

13. Բանախոսություն՝ «Համաժամանակյա թարգմանության օր»

13.11 Բուն ակումբում մեկնարկող «Թարգմանչական Շաբաթ 2021» նախագծի շրջանակներում ԵԼՀ ՈւԳԸ անդամները հնարավորություն ունեցան մասնակցելու «Համաժամանակյա թարգմանության օր» խորագիրը կրող մասնագիտական բանախոսությանը:

Բանախոս՝ Շուշան Մելիք-Ադամյանը ներկայացրեց բանավոր թարգմանության պատմությունը, համաժամանակյա և հաջորդական թարգմանությունների տարբերակիչ առանձնահատկությունները, այնուհետև անդրադարձ կատարեց թարգմանության (SWOT) վերլուծությանը, ինչպես նաև համաժամանակյա թարգմանիչ դառնալու անհրաժեշտ նախադրյալներին:

14. Մեմինար-բանախոսություն՝ «Ինչպե՞ս չդառնալ ծրագրավորող:

Թարգմանչի մասնագիտական կայացման ուղիները» 22.11 Նոյեմբերի 22-ին ԵԼՀ ՈԻԳԸ-ն հյուրընկալել էր ռուսաց լեզվի մասնագետ, թարգմանիչ, "Aorist" թարգմանչական գրասենյակի տնօրեն Անի Անանյանին, ում գլխավորությամբ էլ կայացավ «Ինչպե՞ս չդառնալ ծրագրավորող:

Բանասերի/թարգմանչի մասնագիտական կայացման ուղիները» խորագիրը կրող սեմինարը:

▪Սեմինարի ընթացքում քննարկվեց.

Թարգմանչի աշխատանքը հնարավոր բոլոր ոլորտներում և այդ ոլորտներում որպես թարգմանիչ կայանալու տարատեսակ ուղիները,

Դասավանդման գործընթացում թարգմանչի/բանասերի ներգրավվածությունը՝ փորձ ձեռք բերելու և հետագա մասնագիտական գործունեության ընթացքում կիրառելու հնարավորությունները,

Ներկայացվեց բանավոր թարգմանության տեսակների՝ համաժամանակյա և հաջորդական թարգմանական գործունեության, հմտությունների բարելավման, մարտահրավերների հաղթահարման մասին, ինչպես նաև մասնագետը կիսվեց իր իսկ փորձով:

15. Միջֆակուլտետային օլիմպիադա

Անգլերենի օլիմպիադա

25.11 Երեկ՝ նոյեմբերի 25-ին տեղի ունեցավ ԵԼՀ ՈԻԳԸ-ի կազմակերպած անգլերենի օլիմպիադան:

Օլիմպիադան հնարավորություն ընձեռեց ուսանողներին՝ ինչպես լեզվական գիտելիքները ստուգելու, այնպես էլ՝ նոր գիտելիքներ ձեռք բերելու:

16. Սեմինար-բանախոսություն

“Teaching Skills for Tutoring”

07.12 Դեկտեմբերի 7-ին ԵԼՀ ՈԻԳԸ շրջանակներում տեղի ունեցավ “Teaching Skills for Tutoring” խորագրով սեմինարը:

Այս անգամ ՈԻԳԸ-ն հրավիրել էր բանախոսելու "ENGLISH IQ" ուս.կենտրոնի հիմնադիր-տնօրեն, անգլերենի մասնագետ, բիզնես կառավարման մագիստրոս Աննա Մարկոսյանին:

Սեմինարի ընթացքում.

Բանախոսը կիսվեց իր հաջողության պատմությամբ,

բացատրեց և հիմնավորեց այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են դասավանդողին,

քննարկվեց կրթության կարևորությունը մեր հայրենիքում,

կայացավ հարց-պատասխան ֆորմատը և մասնակիցները բանախոսին հղեցին իրենց հուզող հարցերը:

17. Միջֆակուլտետային օլիմպիադա

Ֆրանսերենի օլիմպիադա

08.12 Դեկտեմբերի 8-ին տեղի ունեցավ ԵԼՀ ՈւԳԸ-ի կազմակերպած ֆրանսերենի օլիմպիադան:

Օլիմպիադան հնարավորություն ընձեռեց ուսանողներին՝ ինչպես լեզվական գիտելիքները ստուգելու, այնպես էլ՝ նոր գիտելիքներ ձեռք բերելու:

Նշվեց նաև, որ այս անգամ օլիմպիադային մասնակցելու հայտ ներկայացրել էին ոչ միայն Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի, այլև Միջազգային հարաբերություններ ֆակուլտետի ուսանողները:

2.Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ ՈւԽ նախագահի հաշվետվությանը: ՈւԽ նախագահ Գոհար Հարությունյանը ներկայացրեց 2021-2022 թթ հաշվետվությունը: Նա նշեց, որ ուսումնական տարվա կտրվածքով ԵԼՀ ուսանողական խորհուրդը ծավալել է բազմաբովանդակ գործունեություն՝ շեշտը դնելով ՈւԽ կանոնադրությամբ սահմանված ուխ նպատակների իրագործման վրա: Համաձայն Ուսանողական խորհրդի կանոնադրության՝ ուսանողական խորհրդի նպատակներից է իրագեկել ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների, բողոքարկման կարգի, լուծարքների և համալսարանին վերաբերող մի շարք հարցերի մասին: Հիմք ընդունելով այս փաստը՝ Ուսանողական խորհուրդը կազմակերպել է իրագեկումներ հետևյալ թեմաներով՝

- 1) Բողոքարկում և լուծարքներ,
- 2) Իրավունքներ և պարտականություններ,
- 3) Զեղչային համակարգ,
- 4) Դիպլոմային աշխատանքներ ,
- 5) Աշխատանքային իրավունքներ,
- 6) Տարկետում և տեղափոխություն:

Տվյալ իրագեկումների նպատակն է բարձրացնել ուսանողների իրագեկվածության մակարդակը համալսարանի և արտահամալսարանական հարցերի շրջանակներում: Ուսանողները տեղեկություններ են ձեռք բերում բողոքարկման կարգի, իրենց իրավունքների և պարտականությունների, դիպլոմային աշխատանքների ամբողջ ընթացքի, զեղչային համակարգի և դրանից օգտվելու հիմքերի և այլ մանրամասների մասին:

Ֆակուլտետի սպորտային ոգին բարձր պահելու համար սպորտի հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպվել են մի շարք ներֆակուլտետային և միջֆակուլտետային ընկերական խաղեր ֆուտբոլի, վոլեյբոլի, թենիսի, շախմատի և հրաձգության մարզաձևերում: Նման խաղերի նպատակն է պահել սպորտային պատրաստականությունը և ուսանողների սերը սպորտի հանդեպ՝ կարևորելով առողջ ապրելակերպի պահպանումը մեր կյանքում: Բացի այդ նման խաղերը հիանալի հնարավորություն են հանդիսանում այն ուսանողները համար, ովքեր երկար տարիներ զբաղվել են որոշակի սպորտաձևերով և պատրաստ են դրսևորել և զարգացնել իրենց սպորտային ունակությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսանողներին միշտ հետաքրքրել է արտասահմանում ուսանելը, արտասահմանյան մշակույթը և ապրելակերպը՝ իրականացվել են հանդիպումներ մի շարք սփյուռքահայերի հետ, ովքեր բնակվում են Ֆրանսիայում, Արգենտինայում, Իսպանիայում: Հանդիպումների ընթացքում հյուրերը ներկայացրել են տվյալ երկրների

մշակութային առանձնահատկությունները, այնտեղ գործող հայկական համայնքները և հայերի գործունեությունը, ինչպես նաև կրթական համակարգը՝ զուգահեռներ տանելով մեր համալսարանի կրթական համակարգի հետ:

Հաշվի առնելով նաև այն փաստը, որ ուսանողները մեծ հետաքրքրվածություն ունեն կամավորական աշխատանքների հանդեպ՝ Ուսանողական խորհուրդը կազմակերպել է հանդիպում հայտնի "Dark company" ընկերության հետ, որի ներկայացուցիչները մանրամասն ներկայացրել են իրենց ընկերությունում կամավոր աշխատանքների տված հնարավորություններն ու առավելությունները:

Կամավորական աշխատանքների շրջանակներում նաև կազմակերպվել է հանդիպում "Peace corps"-ի կամավոր , ամերիկուհի Սոեմի Ջոբայդայի հետ, ով իր հերթին ներկայացրել է կառույցը, գործունեությունն ու տված հնարավորությունները, ինչպես նաև խոսել է Հայաստանում ապրած տարիների, մշակութային շոկի և իր կամավորական փորձի մասին:

Ֆակուլտետում կան շատ ուսանողներ, ովքեր արդեն իսկ փորձում են իրենց առաջին քայլերն անել աշխատանքի և կարիերայի ոլորտում: Հիմք ընդունելով այս փաստը՝ ուսանողական խորհուրդը կազմակերպել է հանդիպում- սեմինար "Կարիերայի հաջողության ուղին" խորագրով, որի բանախոսն է եղել կարիերայի կառավարման մասնագետ Էլեոնորա Մարգարյանը: Բանախոսը ուսանողներին ներկայացրել է ճիշտ և գրագետ Ռեզյումե, սիվիլ և մոտիվացիոն նամակ գրելու, աշխատանքային հարցազրույցին ճիշտ ներկայանալու նախադրյալներն ու չափանիշները:

Շարունակելով արտաքին համագործակցությունների շարքը՝ իրականացվել է հանդիպում "SIS education" կառույցի հիմնադիր տնօրենի հետ, ով ներկայացրել է կառույցի կարգախոսը, նպատակները, որոնց հիմքում նորից ընկած են ուսումն արտասահմանում շարունակելու հնարավորությունները:

Քանի որ ֆակուլտետը կոչվում է Եվրոպական լեզուներ և հաղորդակցություն, իսկ լեզուն անմիջական կապ ունի մշակույթի հետ, ֆակուլտետում կազմակերպվել են տարբեր մշակութային միջոցառումներ և այցեր:

Կազմակերպվել է ֆիլմդիտում՝ Եվրոպական գեղարվեստական կինոյի օրվա առթիվ: Ուսանողները դիտել և քննարկել են "Փարաջանով" գեղարվեստական ֆիլմը և այնուհետև այցելել են Փարաջանովի տուն-թանգարան: Համենայն դեպս դեպի թանգարան այցերը չեն սահմանափակվել միայն սրանով: Կազմակերպվել են նաև այցեր Երվանդ Քոչարի, Ցեղասպանության թանգարաններ, ինչպես նաև ԵՊՀ պատմության թանգարան:

Ֆակուլտետին բնորոշ է ամեն տարի առանձնահատուկ կերպով նշել Տյառնընդառաջը, որը այս տարի ևս կազմակերպվել է: Ֆակուլտետի մասնաշենքի դիմաց նշվել է Տյառնընդառաջը ազգային երգ ու պարով , երաժշտությամբ, ազգագրական պարերով , տոնական սեղանով և հյուրասիրությամբ:

Եւս մեկ ավանդույթ կա ֆակուլտետում՝ գրքի տոնը, որը ամեն տարի նշվում է՝ գիրք նվիրելով, ասմունքի ցերեկույթով՝ ուսանողների մեջ սերմանելով սերը գրականության և պոեզիայի հանդեպ:

Մշակույթի հանձնաժողովի աշխատանքների շրջանակներում վերջերս կազմակերպվել է սեմինար "Գեղեցկության ընկալումը տարբեր մշակույթներում" թեմայով լմհ ամբիոնի

դասախոս, պրոֆեսոր Նարինե Հարությունյանի հետ: Մեմինարը ավելի քան հազեցած և հետաքրքիր է անցել, մի փոքր նույնիսկ շոկային , համենայն դեպս ուսանողները, իսկապես, շատ տպավորված էին:

Ընդգծելով այն փաստը, որ ուսանողներին բավականին հետաքրքրում է մշակույթին առնչվող ցանկացած թեմա՝ կազմակերպեցինք սեմինար Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դասախոս Մարինե Միքայելյանի հետ, որի ընթացքում մեծ մասամբ քննարկել ենք մարդու մշակույթային ինքնության ձևավորման պրոցեսը՝ գուգահեռներ տանելով մեր մասնագիտական ուսումնասիրությունների հետ:

Գրականության ու բանասիրության հանդեպ ուսանողների սերը հաշվի առնելով՝ կազմակերպել ենք մի շարք հանդիպումներ, որոնք են

Հանդիպում "Կարմիր" գրքի հեղինակ, լրագրող և արձակագիր Հովիկ Աֆյանի հետ, որի ընթացքում քննարկվել է հեղինակի ստեղծագործությունը, գրական-ստեղծագործական ուղին, դրանում հանդիպած խոչընդոտները և դրանց հաղթահարումները, ինչպես նաև ստեղծագործողների յուրօրինակ մտածելակերպի մասին:

Շարունակելով գրականությանն ուղղված միջոցառումների շարքը՝ ունեցել ենք հանդիպում "Հարի փոթեր" գրքաշարի 5 մասերի թարգմանության հեղինակ Ալվարո Զիվանյանի հետ: Բանախոսը խոսել է գրքի 5 մասերի թարգմանությունների և ընդհանրապես թարգմանություններ կատարելու նրբությունների, մարտահրավերների և դրանց հաղթահարման մասին:

Հանդիպում է կազմակերպվել նաև լեզվաբան, գրականագետ Ամալյա Սողոմոնյանի հետ՝ "Անգլերեն լեզուն և գրականությունը այսօր" թեմայով: Ընթացքում խոսվեց հայաստանյան իրականության մեջ անգլերենի լեզվի կարևորության, լեզվի դասավանդման որոշակի մեթոդիկայի, մասնագիտական կողմնորոշման և անգամ Ելի ում սովորելու կարծրատիպերի մասին: Նշվեց, որ ունեցել են նաև բանախոսություն Արթուր Պապյանի կողմից՝ "Մեդիագրագիտություն" թեմայով, որի հիմքում ընկած էին սոց հարթակներում գրագետ լսարանի, մեդիա դաշտի և ճիշտ տեղեկատվության տարածման թեմաները: Հատկապես այսօր բոլորիս համար կարևոր է պահպանել սոց հարթակներում զգուշությունն ու զգոնությունը, որի մասին էլ հենց խոսել է բանախոսը: Ամբողջ կիսամյակ ուսանողական խորհուրդը անցկացնում է "Արի մրցենք" ամենամյա միջֆակուլտետային մրցաշարը, որին ֆակուլտետները ներկայացնում են լավագույն ուսանողները: Ահա այս նպատակով էլ Ուսանողական խորհուրդը կազմակերպ է մի շարք ներֆակուլտետային խաղեր , ինչպիսիք են "Ամենախելացին" , "Ինչ, որտեղ, երբ" "+/-" , և "Արդյոք ովքեր են" :

Միջֆակուլտետային խաղերում ֆակուլտետը հաջողություններ է գրանցել՝ "Արդյոք ովքեր են" խաղում գրավելով 3րդ հորիզոնականը, իսկ "+/-" խաղում պատվավոր առաջին հորիզոնականը: Սակայն կարեորագույն խաղը "Ինչ, որտեղ, երբ"-ը դեռևս տեղի չի ունեցել:

Նշվեց, որ ուսանողները մեծ հետաքրքրվածություն ունեն արտասահմանում կրթությունը շարունակելու հանդեպ, և այդ կապակցությամբ կազմակերպել է նաև "ELC TALK" օնլայն օրագիրը, որի ընթացքում ֆակուլտետի ուսանողները, ովքեր հանդիսանում էին Erasmus+ փոխանակման ծրագրի մասնակից, կիսվեցին իրենց փորձով, պատմեցին ծրագրի առավելությունների ինչու չէ նաև թերությունների մասին, ինչպես նաև ծրագրի նախապատրաստական աշխատանքների մասին:

Ունեցել են մի քանի հանդիպումներ Ամերիկացի դասախոս Լորա Շայֆերի հետ, որոնց ընթացքում նա ուսանողներին ներկայացրել է ամերիկյան Մշակույթը, օտար լեզուներ սովորելու մեթոդները, ամերիկյան սլենգը, և այլն:

Ուսանողական խորհուրդը առանձնահատուկ տեղ է հատկացնում հայկական ավանդական ավանդույթներին, պարերին, և առհասարակ ազգայինին՝ սերմանելով այս սերը ամեն տարի եկող նոր սերունդներին մեջ:

Այս նպատակով մարտ ամսին Ելի ուխտ, սոցիոլոգիայի ֆակուլտետի ուխտի հետ միասին կազմակերպել էր այց Բյուրականում գտնվող "Տոնացույց" վայր, որտեղ ուսանողները մի ամբողջ օր անցկացրին հայ ավանդական երգերի, պարերի, խաղերի, ավանդույթների մեջ: Այսինքն կարելի է ասել, որ ամբողջ օրը անցավ "ազգային մթնոլորտում"

3. Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երրորդ հարցին՝ 2021-2022թ.թ.ուս. տարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում: Նա նշեց, որ ընդհանուր առմամբ բոլոր ամբիոններում արդյունքները բավարար են, բայց, այնուամենայնիվ, կան մտահոգիչ համգամանքներ, երբ որոշ դասախոսներ հինգ միավորից ստացել են երեք: Քննարկման արդյունքում գիտխորհրդի անդամները որոշեցին գրավոր առաջարկով հանդես գալ, որպեսզի փոխվի գնահատման ընթացակարգի ձևաչափը և այն իրականացվի ուսանողների գոնե 50% պարտադիր ներկայության ժամանակ, ոչ թե հեռավար ձևաչափով:

Միաձայն որոշման արդյունքում որոշեցին՝

- Տպագրության երաշխավորել ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ.,դոցենտ Հ. Բաղդասարյանի «Համընդհանուրի, ազգայինի և անհատականի եռամիասնությունը որպես թարգմանաբանական խնդիր» խորագրով մենագրությունը: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Քննարկել ԵԼՀ ֆակուլտետում «Արտասահմանյան գրականություն և ստեղծագործական վարպետություն» անվանումով բակալավրի նոր կրթական ծրագրի բացման հարցը և դիմել ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր տիկին Է. Ասրիյանին՝ վերոհիշյալ ծրագիրը բացելու գործընթացի մեկնարկի իրավունք ստանալու խնդրանքով:
- Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի 2022թ.հայցորդ Ալվարո Մայիլյանի թեկնածուական ատենախոսության թեման «Ժամանակը և տարածությունը Ժ.Պ. Սարտրի գեղարվեստական տիրույթում» վերնագրով, Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար նշանակել **դոց. բ.գ.թ.Անուշ Ռոստոմի Սեդրակյանին**: Որոշումն ընդունվեց միաձայն
- Միջմշակութային հաղորդակցության ամբիոնի բ.գ.դ.,պրոֆեսոր Ն. Հարությունյանի և Ս. Գրիգորյանի «Learn English and Culture through Media» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության: Որոշումն ընդունվեց միաձայն: :

ԵԼՀ ֆակուլտետի

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան



Մ.Դալայան